

## Ա Ռ Ա Ր Կ ՈՒԹ Յ ՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 27, 28-Ն, 29-Ա, 31-Ա, 33-Ն, 34-Ն, 35 ԵՎ 36  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 27 որոշման մեջ 2019 թվականի դեկտեմբերի 25-ին հաստատվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ի արտահերթ նիստի օրակարգը: Հետևաբար, անհրաժեշտ է որոշման 1-ին կետում «20» թիվը փոխարինել «25» թվով:

Թիվ 28-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված «Սույն օրենքի» բառերը փոխարինել «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով: Հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված «երկու հազար հինգ հարյուր դրամ» տեղական տուրքի դրույքաչափը չի համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «բ» ենթակետի 2-րդ պարբերությամբ նախատեսված տեղական տուրքի դրույքաչափին: 11-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերում «Սահմանված տուրքի» բառերից հետո համապատասխանաբար նշել «25 % չափով,» և «10 % չափով,» թվերը և բառերը:

Որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետում հարկավոր է կիրառել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վճարներից միայն մեկը:

Թիվ 29-Ա որոշման բովանդակության մեջ չի գրառվել 2019 թվականին իրականացված գույքագրման օրն ու ամիսը:

Թիվ 31-Ա որոշման վերնագրում, 1-2-րդ կետերում և որոշմամբ հաստատված N 1 հավելվածի վերնագրում նշված «համայնքի» բառն անհրաժեշտ է հանել:

Որոշմամբ հաստատված N 1 հավելվածում «1-ին կարգի մասնագետ /3.2-1/» 5-րդ տողի «Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)» սյունակում նշված «51.03» թիվը փոխարինել «56.03» թվով:

Որոշմամբ հաստատված N 2 հավելվածում «Դաստիարակ» 15-18-րդ տողերի «Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)» սյունակում նշված «32.2» թիվը փոխարինել «56.03» թվով:

Թիվ 33-Ն որոշմամբ հաստատված հավելվածի վերնագրի վերևի մասում նշված «1.Եկամուտներ 69,314.6 հազար դրամ» և «2. Ծախսեր 69,314.6 հազար դրամ» թիվը փոխարինել «1.Եկամուտներ 69,314.2 հազար դրամ» և «2. Ծախսեր 69,314.2 հազար դրամ» թվով: «Բյուջետային ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման» աղյուսակում «Ընդամենը ծախսեր» տողի «Ընդամենը հազ. դրամ» և «մաս հազ. դրամ» սյունակներում նշված «69,314.6» թիվը փոխարինել «69,314.2» թվով:

Թիվ 34-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետում նշված «77,560.100» թիվը փոխարինել «77,559.100» թվով:

Թիվ 35 որոշման նախաբանում կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 8-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան կետին:

Թիվ 36 որոշման նախաբանում նշված «հոդվածի» բառից հետո լրացնել «1-ին մասի» բառերը:

Որոշումը չի համապատասխանում □ Տեղական ինքնակառավարման մասին □ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասին, համաձայն որի՝ համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների

ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են: Բացի այդ, որոշման 4-րդ կետի համարակալումը սխալ է գրառված:

Որոշումները մարզպետարան առաքվել են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան  
27.02.2020թ.